

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ–ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանավոր խոսքում միշտ չէ, որ խոսողը պահպանում է քերականական բոլոր նորմերը: Սակայն գրավոր հանրային խոսքը, մինչ համացանցի տարածումը կառուցվել է հայերեն լեզվական նորմերի պահպանմամբ, մեծամասամբ ենթարկվել է գրաքննության, խմբագրման: Այսօր իրավիճակը խիստ փոխվել է: Ամենաբազմազան սխալների կողքին (ուղղագրական, կետադրական, բառային), ակնհայտ են նաև քերականական նորմերի խախտման բազմաթիվ օրինակներ: Այդ օրինակների քննությանն է նվիրված սույն հոդվածը: Մասնավորապես դիտարկվել են հոգնակի թվի կազմության սխալները, թվականների և դերանունների սխալ կիրարկությունները, կապերի սխալ գործածությունները, բայական նորմերի խախտման դեպքերը, ինչպես նաև առօրյա–խոսակցական լեզվում տարածված որոշ արտահայտությունների ներթափանցումը գրավոր խոսք:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լեզվական նոր, քերականական նորմ, նորմ և կիրարկություն, նորմերից կատարվող շեղումներ/խախտումներ, համացանցային սխալ կիրարկություններ:

Նորմի բնորոշումը: Նորմը լեզվաբանները բնորոշել են ըստ նրա բազմակողմանի գործառնությունների: Նախ այն բնորոշել են որպես պատմական, հարաբերականորեն կայուն և անփոփոխ

երևույթ: Լեզվական նորմը պատմական հասկացություն է, քանի որ այն, ինչ ճիշտ է լեզվի զարգացման տվյալ շրջանի համար, կարող է սխալ համարվել մեկ այլ շրջանի համար: Ըստ Աղաջանյանի՝ հարաբերականորեն կայունություն հասկացության մեջ մտնում են «պատմական կայունությունը, անխախտությունը, ավանդականությունը, լեզվի տարբերակարդակներում որոշակի սահմանափակումը հնարավոր տատանումների և զուգաձևությունների հարցում, նորմի տարածքային միօրինակացումը և այլն»¹:

Լեզվական նորմի անխախտությունն ու ավանդականությունը առաջին հերթին ապահովում է սերունդների միջև կապը: Կայունության և ավանդականության մասին եզեկյանը նշում է. «Նորման, պահպանելով լեզուն հարաբերական կայունության և միօրինակության մեջ, հեշտացնում, դյուրին է դարձնում ոչ միայն տվյալ հասարակության մեջ, այլև տարբեր պատմական ժամանակաշրջաններում ապրող մարդկանց լեզվական ըմբռնումները»²: Նորման հենվում է սովորույթի և ավանդականության վրա, բայց դա չի նշանակում, որ լեզուն, մեր դեպքում՝ հայերենը, որի գրական տարբերակը նորմավորվել է դեռևս 5-րդ դարում, այդպես մեզ է փո-

1 Ձ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 14:

2 Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007թ, էջ 95:

խանցվել, հասել 21-րդ դար: Այն կրել է բազմաթիվ փոփոխություններ իր զարգացման տարբեր փուլերում: Այս երևույթը կատարվել է ավանդախախտության հետևանքով: Ավանդախախտությունը լեզվական նորմին բնորոշ հատկանիշ է: Սրանից հասկանում ենք նորմի պատմականորեն նաև անկայուն լինելը: Փոփոխություն է կատարվում և՛ բառապաշարում, կապված հասարակության սոցիալական, տնտեսական, քաղաքական, գիտական, տեխնիկական և մշակութային կյանքի զարգացման հետ, և՛ քերականական կառուցվածքում, և՛ խոսքի արտահայտման ձևերում: Աղաջանյանն անդրադառնալով ավանդախախտության դեպքերին, ասում է, թե որ նորմերն են առավել կայուն կամ հակառակը. «ուղղագրության բաժնում ամբողջապես լեզվական համակարգն է որոշում նորմը, դրա համար էլ այն աչքի է ընկնում առավել կայունությամբ: Բառապաշարային մակարդակում որոշիչ են լեզվական միավորների բովանդակային կողմը, նրանց իմաստային ճշտությունը և ոճական հարմարությունը, ոճաբանորեն տեղին լինելը, այստեղից էլ՝ լեզվի հոմանշային միջոցների լայն օգտագործումը, տարբերակները, փոփոխությունները: Ահա թե ինչու այս մակարդակում լեզվական նորմի կայունությունը համեմատաբար ցածր է... Ձևաբանական մակարդակում նորմը շատ ավելի կայուն է, քան մյուս մակարդակներում. պատճառը քերականական իմաստների և արտահայտման քերականական ձևերի առավել քիչ փոփոխական լինելն է... Քերականական կառուցվածքը շատ դանդաղ է փոփոխվում»: Ավանդախախտությունը լեզվում կատարվող շեղումներն են, որոնք ժամանակի ընթացքում դառնում են ավանդույթ և ինչպես Գ. Սևակն է նշում իր «ժամանակակից հայոց լեզվի դասընթացը» գրքում, առանց ավանդախախտության լեզվի մեջ փոփոխու-

թյուն չէր կարող տեղի ունենալ և լեզուն կզրկվեր զարգացումից:

Եթե նորման որոշակի կանոնների ամբողջություն է, որը պարտադրականության ուժ է ձեռք բերում որոշակի ժամանակներում, որոշակի միջավայրում, որոշակի հանգամանքներում, ապա կարելի է ասել, որ նորմը պատմականորեն փոփոխվող երևույթ է: Այն հիմնականում կիրառվում է որոշակի միջավայրում և կախված է տվյալ հանգամանքներից, այսինքն՝ հաշվի է առնվում իրադրական և գործառական ոճերը, իսկ այս ամենի իմացությունն էլ ապահովում է հասարակության հաղորդակցումն ու կապը միմյանց հետ: Այսինքն՝ լեզվական նորմերի իմացությունը թույլ է տալիս մարդկանց շփվել միմյանց հետ հասկանալի ձևով:

Նորմը վերացական միավոր է համարում Աղայանը. «յուրաքանչյուր բառ, քերականական ձև, բառերի կապակցությունների կանոն և այլն խոսքից դուրս վերացական միավոր է ... Այն ինչ խոսքի մեջ մասնավոր է և կոնկրետ, խոսքից դուրս, մեր գիտակցության մեջ ընդհանուր է, վերացարկված. նրանք վերացական միավորներ են, կանոններ ու կաղապարներ, որոնք մասնավորվում, իրական դրսևորում են ստանում հաղորդակցման ժամանակ, խոսքի մեջ»²: Այստեղից հետևում ենք, որ նորմը գոյություն ունի մեր գիտակցության մեջ որպես «լեզվական ներունակ կարողություն»: Այս մտքի հետ համապատասխան է Զ. Աղաջանյանի այն միտքը, թե լեզվական նորմը մտացածին չէ, գիտնականի ու գրողի, լեզվաբանի ու լեզվագետի մտահաղացում չէ: Ինչպես հասկացանք նորմը կամ նոր սաղմնավորվող լեզվական միավորը չի ձևավորվում հատուկ գիտնականի կողմից, այն ծնվում է ինչ որ առիթով, որևէ անհատի հոգեբանական վիճակ կամ մտածողություն յուրովի արտահայտելու հետևանքով, ծնվում

1 Զ. Աղաջանյան, նույն տեղում, էջ 15:

2 Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 117:

է խոսքային գործընթացում:

Նորմը գործում է լեզվի բոլոր մակարդակներում, սկսած ամենափոքր նյութական միավորից՝ հնչյունից: Այս մակարդակներում նորմը գնահատողական դեր է կատարում՝ սահմանելով ձիշտ և սխալ գրելու, արտասանելու, քերականական ձև կազմելու, կապակցելու և շարադասելու նաև խոսելու կանոնները: Սրանք օրինակելի և օրինաչափ կանոններ են, որոնք պարտադիր են և միասնական տվյալ լեզվով խոսող հանրության համար: Նորմի միասնականությունը խախտվում է մի շարք պատճառներով: Դրա պատճառ կարող է լինել օտար լեզուների ազդեցությունը, ինչպես օրինակ մեր լեզվական նորմի միասնականության վրա տարբեր ժամանակներում ազդել են ռուսերենը և անգլերենը: Կարող է պատճառ դառնալ նաև տարածքային բաժանումը, օրինակ Հայաստանի երկու մասի բաժանվելը, որի հետևանքը դարձավ աշխարհաբարի միասնական նորմի բաժանումը արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակների:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ գրական նորմը օրինակելի և օրինաչափ, պարտադիր և միասնական կանոնների համակարգ է, որոնք նորմավորում են լեզվի զարգացման համապատասխան փուլը՝ պահպանելով հարաբերական կայունություն, այսինքն՝ ավանդապահություն ու ավանդախախտություն և ապահովում հասարակության հաղորդակցումը, նրանց խոսքում գնահատելով ձիշտը և սխալը, լավը և վատը, թույլատրելին և անթույլատրելին:

Քերականական նորմ և համացանց:

Երբ բանավոր լեզուն ունենում է նաև գրավոր տարբերակ, այն լինում է նորմավորված ու կարգավորված և ստանում է գրական լեզու անվանումը, որը ազգային լեզվի կատարելագործված տեսակն է: Հայերենի՝ գրաբարի առաջին նորմավորողներն են եղել Մեսրոպ

Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Այդ ժամանակ, սակայն, գրական լեզուն շատ էր տարբերվում խոսակցական լեզվից, իսկ այժմ միտում կա գրական լեզուն մոտեցնել բանավոր խոսքին, որ այն շատ գրքային չլինի: Գրքային՝ գրական լեզվի և խոսակցականի միասնականացում և միօրինակացում կլինի ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման, գրագիտության տարածման, կրթական համակարգի զարգացման և այն միջոցների հսկման շնորհիվ, որոնք ազդեցություն են թողնում հասարակության վրա, դրա մեջ մտնում են դպրոցը, հեռուստատեսությունը, սոցիալական միջավայրը: Գաղտնիք չէ, որ բանավոր խոսքում միշտ չէ, որ խոսողը պահպանում է քերականական բոլոր նորմերը: Սակայն գրավոր հանրային խոսքը, մինչ համացանցի տարածումը կառուցվել է հայերեն լեզվական նորմերի պահպանմամբ, մեծամասամբ ենթարկվել է գրաքննության, խմբագրման, ինչն օգնել է որոշ չափով պահպանել լեզվի քերականական ճշտությունը: Սակայն, ցավոք, նույնը չենք կարող ասել մեր օրերի մասին: Ներկայումս լեզվի հիմնական կրողները թվային տեխնոլոգիաներն են՝ համակարգիչ, հեռախոս և այլն: Լեզվի զարգացմանն ու ձևափոխմանն էլ մեծապես նպաստում է համացանցը: Իսկ համացանցային լեզուն անվերահսկելի է: Համացանցային գրագրության ժամանակ մարդիկ, մասնավորապես երիտասարդները, հաճախ գլանում են անգամ հայատառ գրել, էլ ինչ խոսք քերականական կանոնների պահպանման մասին:

Որպես ուսումնասիրության նյութ՝ ընտրել ենք քերականական նորմերից դիտարկվող շեղումները համացանցում, և քանի որ համացանցը շատ լայն հասկացություն է, ուսումնասիրություն անց ենք կացրել մասնավորապես սոցիալական ցանցերում:

Ի սկզբանե պետք է նշել, որ սոցիալական ցանցերում կան օգտատերեր, որոնք գրում են բացառապես հայատառ

և բացառապես գրագետ, սակայն նման օգտատերերի թիվը շատ քիչ է: Ամենաբազմազան սխալների կողքին /ուղղագրական, կետադրական, բառային/, քիչ չեն նաև քերականական նորմերի խախտումները, մասնավորապես ակնհայտ են ձևաբանական, շարահյուսական և շարահարական սխալներ:

Նշենք նորմերի ամենատարածված խախտումների մի քանի օրինակներ.

1. Տարածված սխալ է հոգնակի թվի սխալ կազմությունը: «Հայերենում ընդունված կանոն է՝ միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-եր** մասնիկով, իսկ բազմավանկ բառերինը՝ ներ-ով»:¹ Իսկ եթե բազմավանկ բառի վերջին բաղադրիչը միավանկ բառ է, ապա հոգնակին կազմվում է **-եր** մասնիկով: Այս կանոնները սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից ոչ միշտ են պահպանվում, օրինակ՝ **խաչքարներ, ճակատամարտներ, աշխատավարձեր** և այլն, փոխանակ՝ **խաչքարեր, ճակատամարտեր, աշխատավարձեր**:

Թեև պետք է նաև նշել, որ այստեղ լեզվի կանոնարկման լուրջ խնդիր էլ կա: Ինչպես իրավացիորեն նկատում են լեզվաբանները (Խ. Բաղիկյան, Դ. Գյուրջիյան և այլք), միշտ չէ, որ միավանկ գոյական բաղադրիչ ունեցող բազմավանկ գոյականները ստանում են **-եր**, երբեմն կազմվում են նաև՝ **-ներ-ով**, ինչպես օրինակ՝ **վերջակետեր**, բայց **ստորակետներ**, **դրամարկղեր**, բայց **տոմսարկղներ**, **թաղապետեր**, բայց **մայրապետներ** և այլն:

2. Մեկ այլ տարածված սխալ է կրկնակի գերադրական աստիճանի կիրառումը, երբ որևէ մեկը ցանկանում է ցույց տալ իր անձնական վերաբերմունքը որևէ անձնավորության կամ երևույթի նկատմամբ:

• Ամենալավագույն բարեմաղթանքներով – լավագույն բարեմաղթանքներով կամ ամենալավ բարեմաղթանքներով

• Ամենագեղեցկագույն աղջիկ – ամենագեղեցիկ աղջիկ կամ գեղեցկագույն աղջիկ

3. Հաճախ թվականների հետ գոյականը դրվում է հոգնակի թվով, այնինչ հայերենում գոյականը թվականի հետ պետք է դրվի եզակի թվով:

• Երեք առաջնորդներ – երեք առաջնորդ

• Երկու վարորդներ – երկու վարորդ

• Քառասուն եկեղեցիներ – քառասուն եկեղեցի

4. Որպես շատ տարածված սխալ՝ կարող ենք նշել **հատ** բառի սխալ կիրառությունը թվականների հետ, հատկապես անձերի մատնանշման դեպքում:

• Հինգ հատ երեխա – հինգ երեխա

• Մեկ հատ քույր – մեկ քույր

5. Դասական թվականներից **առաջին** բառը հաճախ թե՛ բանավոր խոսքում, իսկ հիմա արդեն՝ համացանցային գրառումներում առանց **-ն** հոդի է կիրառվում:

• Առաջի անգամ եմ այս մասին գրում:

• Առաջի անգամ եմ լսում:

Նույն պատկերն է նաև **վերջին** բառի դեպքում. Բազմաթիվ են վերջնահնչյուն **ն**-ի անհարկի սղման դեպքերը համացանցային գրառումներում, որն ըստ էության պայմանավորված է խոսակցական լեզվի ազդեցությամբ, այսպես՝

• Վերջի զգուշացումն արեց պատգամավորը:

• Վերջի հաղորդումը նայե՛լ եք:

6. Գրեթե համատարած **իր, իրեն, իրենց** դերանունների փոխարեն կիրառվում են **իրա, իրան, իրանց** ձևերը, իսկ **այս, այդ, այն** դերանունների փոխարեն՝ **ես, էդ, էն**:

• Իրանց տունը – իրենց տունը

• Իրան ասել եմ – Իրեն ասել եմ

• Էս են ֆիլմն ա, որի մասին ասում էի – Սա այն ֆիլմն է, որի մասին խոսում/պատմում էի:

1 Խաչիկ Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն, Երևան, 2012, էջ՝ 62-63:

Սոցիալական ցանցերում հաճախ **սա**, **դա** դերանուններով դիմում են մարդկանց, իսկ **ինքը** դերանունը հաճախ կիրառվում է անշունչ առարկաների դեպքում, ինչպես.

- Դա (խոսքը քաղաքապետի մասին է) մեզ համոզեց:

- Ինքը ամենահամով պաղպաղակն ա:

- Եվրոպան իմ իմացած ամենալավ առևտուր անողն է: Նա խոսում է մարդու իրավունքներից, ազատությունից ու նմանատիպ արժեքներից, բայց երբեք ինքը դրանց չի հետևում:

- Ինքը (հեռախոսը) շատ բարակ ա ու թեթև: Ես իրան շաաաաատ եմ սիրում:

7. Ակնհայտ է, որ ամենատարածված սխալներից է **ա**-ագրությունը, ասել է, թե **-է** օժանդակ բայը սցիալական ցանցերում գրեթե համատարած վերածվում է **ա**-ի:

8. Հաճախ հրամայական եղանակի բայաձևերն օգտագործվում են առանց վերջնահնչյուն **-ր**-ի, ինչը, մեր դիտարկմամբ, կանոնական դառնալու ճանապարհին է:¹

- Լսի՛ – լսի՛ր
- Գրի՛ – գրի՛ր
- Հավաքի՛ – հավաքի՛ր և այլն:

9. Ակնհայտ են նաև **մոտ**, **հետ**, **վրա** կապերի սխալ գործածության դեպքերը:

Մոտ կապը մոտիկ լինելու իմաստ ունի, այլ ոչ թե մեջ, ինչպես որ հաճախ կիրառվում է:

- Աշտի մոտ ինձ նրա համեստությունն է դուր գալիս:

Որոշ դեպքերում **մոտ** կապը հանդես է գալիս որպես ավելորդություն, ինչպես հետևյալ նախադասություններում.

- Ընտրողների մոտ վախի զգացում կա:

- Ընտրողների մոտ հավատ այլևս չի մնացել:

Հետ կապը միասնության կամ փոխադարձ գործողության իմաստ ունի, մինչդեռ սոցիալական ցանցերը լեփ լեցուն են այս կապի սխալ կիրառության օրինակներով:

- Դեռ չենք ծանոթացել ընտրացուցակների հետ:

- Հետ կանգնիր այդ որոշումից:

- Իմ հետ ամեն ինչ լավ է:

Վրա կապը տեղի հարաբերություն է ցույց տալիս, այն հոմանիշ է տրական հոլով դրվող բառերին՝ նստել աթոռին կամ նստել աթոռի վրա: Սակայն սոցիալական ցանցերը լի են նաև վրա կապի սխալ կիրառություններով:

- Նա նվագում է դաշնամուրի վրա:

- Բաղրամյան պողոտայի վրա...:

- Սիրահարվել ա Լիլուի վրա:

10. Կրկին բանավոր խոսքի ազդեցությամբ լայնորեն տարածում են գտնում այնպիսի կառույցներ, ինչպիսիք են «մեր համար», «իմ համար», «քո համար» և այլն:

- **Իմ համար ամենալավ եղանակը ամառն ա**, փոխանակ՝ **Ինձ համար ...ամառն է:**

- **Քո համար ի՞նչ նվեր առնեմ**, փոխանակ՝ **քեզ համար ի՞նչ նվեր գնեմ** և այլն:

11. Առօրյա կենցաղային լեզվից գրավոր լեզու է ներթափանցել ու սոցիալական ցանցերում լայնորեն տարածվել **մի հատ** արտահայտության անհարկի գործածությունը:

- **Մի հատ** կասե՛ս որտեղ եք հավաքվում:

- **Մի հատ** քեզ հավաքի:

- **Մի հատ** լսի, բան եմ ասում:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ «Հատկապես թարգմանիչ ծրագրերի լիարժեք աշխատանքի դեպքում, կտրուկ կմեծանա հայերե-

1 Տեն Ն. Վարդանյան, Կանոնի և կիրարկության որոշ հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, Ե., 2006 թ. N2, էջ 111-117, Ն. Վարդանյան, Ժամանակակից հայերենի գրական նորմերի խախտումները համացանցում (սոցիալական ցանցերի օրինակով), Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Ե., 2014, էջ 324-327:

նի տեղեկատվական արժեքը, կդադարի հայախոսության ծավալների նվազումը, մեծապես կբարձրանա հայախոս զան-վածի հնարավորությունները ոչ միայն մտավոր, այլև տնտեսական առումով»:

Մեր համոզմամբ՝ լեզվի բնականոն զարգացումը պետք է ընթանա լեզվաբանների, մասնագետների հսկողությամբ, մշտական քննարկումներով, գրական նորմերի կոպիտ սխալների բարձրաձայնմամբ, այդ մասին հան-

րային լայն քննարկումներ կազմակերպելով, պետական համապատասխան կառույցի միջոցով անհրաժեշտ փոփոխությունների առաջաշարժումը և ոչ թե լեզուն ինքնահոսի մատնելով: Բոլորս էլ հասկանում ենք, որ լեզուն բնականոն զարգացող օր•անիզմ է, սակայն ինչպես յուրաքանչյուր օր•անիզմ, լեզուն ևս մայրական հո•ածության և խնամքի կարիք ունի, հակառակ դեպքում գլոբալացվող մեր դարում այն ենթակա է ուժացման:

VIOLATIONS OF GRAMMATICAL AND MORPHOLOGICAL NORMS IN THE INTERNET ARMENIAN

NARINE VARDANYAN

PhD in Philology, Associate Professor

Speakers not always maintain all grammatical norms in oral speech. However, before the Internet came into being the written public speech was predominantly based on preservation of Armenian language norms, which was largely a subject to censorship and editing. Today the situation has dramatically changed. Alongside with numerous mistakes (spelling, punctuation, lexical), a great variety of cases regarding the violation of grammatical norms are evident. The given article is dedicated to the study of these cases. Particularly, the mistakes concerning the plural, the incorrect usage of dates, pronouns and link words, cases of violation of verbal norms, as well as penetration of some common expressions of everyday language into written speech have been considered.

НАРУШЕНИЯ ГРАММАТИЧЕСКИХ - МОРФОЛОГИЧЕСКИХ НОРМ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ В ИНТЕРНЕТЕ

НАРИНЕ ВАРДАНЯН

Кандидат филологических наук, доцент

В устной речи говорящий не всегда поддерживается всех грамматических правил. Однако письменная публичная речь до распространения Интернета строилась согласно нормам армянского языка, в значительной степени подвергаясь цензуре и редактированию. Сегодня ситуация резко изменилась. Рядом со множеством ошибок (орфографических, пунктуационных, лексических) стали появляться многочисленные примеры нарушения грамматических норм. Этим вопросам посвящена данная статья. В частности, нами рассмотрены случаи ошибочного употребления форм множественного числа, неправильное использование числительных и местоимений, неверное использование предлогов, случаи нарушения глагольных форм, а также проникновение в письменный язык некоторых выражений, характерных для повседневной бытовой речи.